ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՑՑԸ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԹՂԹԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

ՀԱՎԱՏՈՎ՝ ԱՐԴԱՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏԻՆ

— Հայ Առաքելական Եկեղեցին միշտ եղել է մեր գոյության ամենահզոր կռվաններից: Հայտնի է նրա պատմական դերը հայ գրի ու գրչության, մշակույթի զարգացման գործում: Մեր օրերին Հայ Եկեղեցին ինչպե՞ս է շարունակում այդ առաքելությունը:

— Մեր օրերում էլ Հայ Եկեղեցին նույն առաքելության ճանապարհի վրա է գտնվում, բայց բոլորովին տարբեր պայմանների մեջ, քան հեռավոր անցյալում: Այսօր մշակութային, գիտական գործունեություն են ծավալում մեր հայրենի ամենաբարձր հիմնարկությունները, ակադեմիան, ինստիտուտները և նման այլ հաստատություններ: Սակայն աշխատանքի բաժին է մնում նաև մեր Եկեղեցուն՝ հատկապես արտասահմանի տարածքի վրա, որտեղ հայերը զրկված են նման հայագիտական, ազգային հաստատությունների գոյությունից: Հետևաբար արտասահմանում Հայ Եկեղեցին և հայ հոգևորականները նաև մշակութային, գիտական գործունեություն են ծավալում: Էջմիածնում, ինչպես գիտեք, գործում է հոգևոր ճեմարանը, որը պատրաստում է հոգևորականներ, որոնք (դա մեր ցանկությունն է) պիտի պատրաստվեն նաև որպես հայ մշակույթի գործիչներ: Եվ նրանցից շատերը լրջորեն աշխատում են, գրքեր են հրատարակում, որոնք գնահատվում են մեր գիտական բարձր հաստատությունների կողմից: Հատկապես Հայ Եկեղեցին իր գլխավոր առաքելությունն է համարում պահպանումը և զարգացումը մայրենի լեզվի, անշուշտ և այստեղ՝ հայրենիքում, և արտասահմանում: Անհավասիկ, այսպիսով հիմնականում մեր Եկեղեցին իր ավանդական ճանապարհի վրա է գտնվում:

— Հայ Եկեղեցին և անձամբ Դուք, որպես նրա պոաջին սպասավորը, պիտիվորեն մասնակցում եք աշխարհում խաղաղության ամրապնդման, պատերազմի սպառնալիքների վերացման համամարդկային պայքարին: Մեր ընթերցողներին հետաքրքիր կլինի ծանոթանալ այդ ուղղությամբ մասնավորապես վերջին շրջանի Ձեր ձեռնարկումներին:

— Հայ Եկեղեցին պետք է ասել, որ պատմականորեն այնպիսի ճակատագիր է ունեցել իր ժողովրդի հետ միասին, որ միշտ աղոթել է խաղաղության համար, միշտ երազել է, որ մեր մայր հայրենիքում վերջ գտնեն պատերազմները, տիրապետի խաղաղության թագավորությունը և հայ ժողովուրդը կարողանա իր ստեղծագործ, շինարար կյանքը շարունակել արդարության, խաղաղության և ապահովության պայմաններում: Դժբախտաբար, ինչպես գիտենք, մեր ժողովուրդը զրկված է եղել ադդիսի խաղաղ պայմաններից հայրենի հողի վրա: Այսօր մենք բարեբախտաբար լավ պայմանների մեջ ենք ապրում, մեր երկիրը՝ Սովետական Հայաստանը, համայն Սովետական Միության ժողովուրդների ընտանիքում ապրում է խաղաղության և անվտանգության մեջ: Բայց, դժբախտաբար, խաղաղության դարը ամբողջապես հաղթանակած չէ տակավին ամբողջ աշխարհի վրա: Դուք գիտեք, որ երկրագնդի վրա շատ վայրերում այսօր էլ ահեղ պատերազմներ են մղվում: Միշտ է, նրանք անմիջապես չեն սպառնում մեր երկրի խաղաղությանը, մեր ժողովրդի կյանքին, սակայն անհանգստացնում են մեզ: Հատկապես սփյուռքահայության մի մասն այսօր տառապում է այդ երկրներում տեղի ունեցող պատերազմների հետևանքով: Չեմ ուզում երկրների անուններ տալ, բայց ծանոթ եք, հայտնի է բոլորին, որ Մերձավոր Արևելքում, որտեղ հոծ հայկական գաղութներ կան, ինչպիսի տագնապալի կացություններ են ստեղծված, և մեր ժողովրդի զավակները զոհվում են: Ահա այս կացության առջև, մենք իբրև քրիստոնյա և որպես հայ ժողովրդի զավակ, պարտք ենք զգում մեր աղոթքը և գործունեությունը շարունակել, մեր նպաստը բերել համայն աշխարհի խաղաղության մարդասիրական մեծ գործին: Այսօր համայն աշխարհում գործում են բազմաթիվ խաղաղասիրական կազմակերպություններ: Տարվում են նաև խաղաղասիրական աշխատանքներ Եկեղեցիների ծոցում, օրինակ խաղաղության եկեղեցական եվրոպական հայտնի շարժումը, որի կենտրոնը Պրագան է, շատ լայն գործունեություն է ծավալում ոչ միայն Եվրոպայում, այլև ամբողջ աշխարհում, և որին մասնակցում են գրեթե բոլոր Եկեղեցիները: Այդ շարժմանը ակտիվորեն մասնակցում է նաև Հայ Եկեղեցին: Մենք մշտական ներկայացուցիչներ ունենք այդ կազմակերպության կոմիտեների մեջ և տարին մեկ-երկու անգամ մեր պատվիրակներին ենք ուղարկում, որպեսզի, ինչպես ասացի, մեր մասնակցությունը բերենք խաղաղասիրական այդ մեծ գործին: Դա նախ մեր կրոնական պարտականությունն է, երկրորդը՝ ազգային: Հատկապես կրոնականը ցանկանում եմ շեշտել, քանի որ Քրիստոսի ավետարանը՝ գրեթե երկու հազար տարի առաջ խմբագրված, հիմնականում մի կոչ է, մի պատգամ է խաղաղության և սիրո՝ ուղղված համայն մարդկությանը:

Անցյալ տարի Ամերիկայում գտնվելու ժամանակ ես ուրախություն ունեցա այցելելու Սպիտակ տուն, ուր ինձ ընդունեց երկրի նախագահը՝ պրեզիդենտ Ռեյգանն իր մերձավորներով: Ես էլ, անշուշտ, մենակ չէի, ինձ հետ կային 10 հոգի՝ Միացյալ Նահանգներում մեր հոգևորականները, կարևոր անձնավորություններ, հայ ազգայիններ: Շատ ջերմ եղավ այդ հանդիպումը, որը տևեց կես ժամից ավելի: Իմ խոսքի մեջ ողջունեցի նոան Հայ Եկեղեցու անունով, Սուրբ Էջմիածնի անունով, նաև Ամերիկայի Հայ Եկեղեցու անունով՝ հայտնելով գոհունակությունս, որ ԱՄՆ-ում Հայ Եկեղեցին և հայ հավատացյալներն ապրում են կազմակերպված ձևով, իրենց եկեղեցիներով, իրենց դպրոցներով, վայելում են ամեն հնարավոր պայմաններ՝ զար-

գացնելու իրենց ավանդական կրոնական հավատքը և իրենց մայրենի լեզուն: Աշխարհի խաղաղության մասին էլ ես խոսեցի՝ դիմելով իրեն և ասելով, որ վստահ եմ, որ նա իր բարձր դիրքերից նպաստ կբերի աշխարհի խաղաղությանը, հօգուտ համայն մարդկության: Որին նա շատ ջերմությամբ պատասխանեց, իր բարի մաղթանքներն արեց Հայ Եկեղեցուն, Սուրբ Էջմիածնին և անձամբ ինձ:

— **Կուզենայինք Ձեր խոսքը լսել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի վերջին պլենումում ընկեր Սուրեն Հարությունյանի զեկուցման մեջ շոշափված Եկեղեցու նկատմամբ նոր քաղաքականության մասին:**

— Ես մեծ գոհունակությամբ կարդացի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի խոսքն ամբողջապես և գնահատեցի այնտեղ նրա ողջամտությունն ու գործնական հայրենասիրությունը, նրա առաջադրանքների արդար լինելը կյանքի բոլոր բնագավառներում: Սակայն առավելապես, անշուշտ, մեզ համար մխիթարություն եղավ, որ առաջին անգամ լինելով, մեր ղեկավարն իր այդ խոսքի մեջ հատուկ տեղ հատկացրեց՝ իր վերաբերմունքը, մեր պետության վերաբերմունքը ճշտելով կրոնական կյանքի, մեր եկեղեցական կյանքի վերաբերյալ, գտնելով և ընդգծելով, որ Եկեղեցին մերօրյա պայմանների մեջ իր դրական աշխատանքը կարող է ունենալ և ծավալել հօգուտ մեր ժողովրդի և երկրի ընդհանուր շահերի: Դա մեզ ոչ միայն ուրախացնում է, այլ նաև, կարծում եմ, պարտավորեցնում է. մենք որպես հոգևորականներ առավել պատասխանատվության գիտակցումո՝ կշարունակենք մեր աշխատանքները, մեր գործունեությունը մայր հայրենիքում և սփյուռքի տարածքի վրա՝ ինչ-որ չափով մեր նպաստը բերելու մեր ժողովրդի կյանքի առաջադիմության, մեր ժողովրդի կյանքի պայմանների բարելավման, մեր ժողովրդի առավել պայծառ ապագան ապահովելու իմաստով:

— **Հեռուստատեսությամբ ունեցած ելույթներից հանրապետության լայն հասարակայնությանը հայտնի է Ձեր հայրենասիրական հստակ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծման գործում: Կկամենայի՞ք այդ հարցին անդրադառնալ:**

— Հիմնականում ես առանձին ավելացնելիք խոսք չեմ ունենա: Դուք արդեն հիշեցրեցիք, որ երկու անգամ հեռուստացույցից ես ելույթներ ունեցա և ասացի ինչ իմ խիղճը թելադրում էր: Այսօր էլ մեր առաջ դրված հիմնական հարցն է՝ այնպես ղեկավարվել, այնպես գործել, որ մեր համազգային միասնությունը պահպանվի Ղարաբաղի հարցի վերաբերյալ: Այնպես, որ մեր սկսած արդար դատը չձախողվի, այլ հաջողությամբ պսակվի: Դրա համար անհրաժեշտ է շատ զգույշ լինել և շրջահայաց, պահել մեր հավասարակշռությունը, մեր ողջամտությունը, մեր հեռատեսությունը և մանավանդ մեր հավատքն արդար դատի հաղթանակի նկատմամբ: Եվ կուզենայի ավելացնել, որ նաև սփյուռքի մեր եղբայրները և քույրերը, ամենքը, բոլոր հասարակական հոսանքներն այնտեղ նույն դիրքորոշման վրա են գտնվում հաստատապես: Մեր հորդորն է հետևաբար բոլորին՝ հոգով-սրտով և պայծառ մտքով հավատարիմ մնալ Ղարաբաղի հայության արդար պահանջներին, հավատարիմ մնալ մեր համազգային ուխտին: Արարատի փեշերին, մեր լեռներին հենված՝ մենք պետք է ապրենք ու գոյատևենք, և մեր ազգը տակավին նոր խոսք պիտի ասի աշխարհին համայն:

— Դուք որպես Հայ Եկեղեցու գլխավորը, սփյուռքի գաղթօջախներում ծավալում եք ազգապահպան գործունեություն: Մի քանի խոսք այդ, ինչպես նաև արտագաղթի ցավոտ խնդրի մասին:

— Մեր այսօրվա վերածնված մայր երկիրը՝ Սովետական Հայաստանը, այն միակ տարածքն է, որ մնացել է մեր փոթորկալի և դժբախտ պատմության տարուբերումներից հետո: Ինչպես հայտնի է, այսօրվա Հայաստանը հազիվ մի փոքրիկ մասն է պատմական Հայաստանի: Մենք երկիրը կորցրել ենք հատկապես 1915-ին, ցեղասպանությունից հետո և այնտեղ հայություն էլ չունենք այլևս: Հետևաբար, արյունալի պատմությունից հետո, մեր ժողովրդի հերոսական մաքառումների, զոհաբերումների գնով այնքանը կարողացանք ապահովել՝ կազմելով մի փոքրիկ հանրապետություն: Անցյալի ազգային դժբախտությունների հետևանքով այսօր գրեթե մեր ժողովրդի կեսը ցրված է աշխարհով մեկ: Գրեթե երկիր չկա աշխարհի վրա, որտեղ հայեր չլինեն: Նրանք հերոսական ճիգեր են ի գործ դնում, որպեսզի հայ ազգը գոյատևի նաև արտասահմանի պայմաններում: Եկեղեցիներով, դպրոցներով, ազգային հաստատություններով և այլն: Սակայն, անշուշտ, որ հայ ժողովրդի ապագան հայրենի այս հողի վրա է որոշվում: Այս հայրենի հողի վրա է, որ միայն տևապես կարելի է ապահովված լինել: Հետևաբար, մեր ազգային ամենակարևոր իղձը, նպատակը պետք է լինի հնարավոր չափով շատացնել հայության թիվը մայր հայրենիքում: Շատացնել համրանքով, թվով, զորացնել տնտեսապես, մշակութապես, ամեն տեսակետներով: Մենք տակավին մեր համրանքով քիչ ենք մեր հողի վրա: Տեսեք, Բելգիան նույն տարածությունն ունի և տասը միլիոն բնակչություն: Իսկ մենք երեք և մի քիչ ավելի: Է, մենք ինչպես կարող ենք հաշտվել, որ էլի պակասի մեր թիվը մայր հայրենիքից: Դա հակազգային, հակահայկական արարք է, որը մենք ոչ մի ձևով չենք արդարացնում: Ինչ պայմանների մեջ էլ լինի հայը, չպիտի բաժանվի իր մայր հողից: Հետևաբար, մեր մաղթանքն է, հորդորը մեր բոլոր զավակներին, որ բնակվում են մայր հողի վրա, անբաժան, անսասան մնալ իրենց բնակավայրի մեջ, իրենց աշխատանքների մեջ: Ոչ միայն չպակասի մեր թիվը, այլ նաև ապագային նոր ներգաղթներով ավելանա: Սա մեր սեպուհ, նվիրական պարտականությունն է: Այն էլ ասեմ, որ արտասահմանի հայությունն էլ այդ պատգամն ունի: Սփյուռքը, բոլոր կազմակերպությունները, եկեղեցիները, կուսակցությունները՝ բոլորն էլ դեմ են արտագաղթին: Անշուշտ, այս պայմանների մեջ մեզ կմնա մաղթել, որ ողջամտությունը և հայրենասիրությունը լսելի դառնան մեր հայրենակիցներին, որպեսզի նրանք չդիմեն արտագաղթի աղետաբեր ճանապարհին:

— Խնդրում ենք մի քանի խոսքով պատմել Հայ Եկեղեցու ներկա վիճակի մասին:

— Մեր երկրում՝ Սովետական Միությունում, մանավանդ, այս վերջին վերակառուցման ժամանակ ստեղծված նոր պայմաններում վերափոխումի, բարեկարգումի շրջան է սկսվել նաև եկեղեցական մակարդակի համար: Մեծ շուքով նշվեց Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու 1000-ամյակը: Այդ առիթով պետության կողմից տարբեր արտահայտություններ, որոնք վերաբերում էին, ճիշտ է, առաջին հերթին Ռուսաց Ուղղափառ Եկեղեցուն, բայց իրականում այդ ոգին տարածվում է նաև Սովետ Միության մեջ գործող բոլոր Եկեղեցիների վրա, բոլոր կրոնական հաստատությունների վրա, այդ թվում նաև մեր Եկեղեցու: Եվ իրոք, գործնական հետևանքներն այն եղան, որ

այս վերջին ամիսների ընթացքում արդեն պետական իշխանության բարյացակամ վերաբերմունքով, և քաջալերանքով ինչպես նաև Սովետական Հայաստանի մեր կրոնից իշխանության ջանքերով բացվեցին բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, հատկապես՝ Տաթևի վանքը, Մակարավանքը: Լենինգրադի հայկական եկեղեցին, որտեղ հենց վերջերս առաջին պատարագը տեղի ունեցավ: Ուրիշ եկեղեցիներ բացվեցին: Այնպես որ, իրոք, եկեղեցական կյանքի զարգացման նոր հորիզոն է բացվում մեր առջև: Այս պայմաններում մենք պետք է մեր ուժերն ավելի լարենք, վերակազմակերպենք, որպեսզի կարողանանք վերաշինել, վերանորոգել այս նոր բացվելիք եկեղեցիները, հոգևորականներ պատրաստել, նյութական միջոցներ ապահովել, լայն, նպատակասլաց, եռանդուն աշխատանք ծավալել, որպեսզի մեր Եկեղեցին կամաց-կամաց ավելի աճի, բարգավաճի և հասնի իր բոլոր արդար սպասումների իրագործմանը: Այս իրադրության մեջ, անշուշտ, մենք առաջին հերթին հետապնդում ենք մի քանի եկեղեցիներ և վանքեր բաց անելու նաև Արցախում, որտեղ մենք ունենք պատմականորեն ժառանգված բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր: Մինչև 1932 թվականը Ղարաբաղում գործել են 18 վանքեր և մոտավորապես 100 գյուղական փոքր եկեղեցիներ: Հատկապես մեզ համար կարևոր են պատմական վանքերը, որոնք կառուցվել են տակավին հնագույն ժամանակներից, ինչպես Ամարասի, հետո Դանձասարի վանքը՝ կառուցված 1237 թվականից: Ահավասիկ, թե ինչպիսի գործունեության լայն դաշտ է բացվել այսօր մեր առջև և պետք է մաղթենք, որ հետագային կարողանանք մեր այս բոլոր ծրագրերը իրագործել:

Արտասահմանի մեր եկեղեցական կյանքը բակավանին բնականոն վիճակի մեջ է գտնվում: Ճիշտ է, որոշ տեղեր Էջմիածնի իշխանության տակ եղող եկեղեցիների և Կիլիկյան Աթոռի միջև որոշ անհասկացողություններ կան, սակայն դրանք հետզհետե մեղմանում են, և մեր հույսն է, ցանկությունը, որ այդ անհասկացողությունները վերանան և վերականգնվի ամբողջ Հայ Եկեղեցու ներքին միասնությունը և գործակցությունը: Մենք այդ ճանապարհի վրա ենք գտնվում: Լավատես պետք է լինենք:

— **Ժամանակներն այնպիսին էին, որ մենք այսօր չգիտենք մյուս պատրիարքարանների, ՍՍՀՄ-ի տարածքում գոյություն ունեցող թեմերի մասին:**

— Կիլիկյան Աթոռը կազմավորված է 15-րդ դարում՝ Կիլիկիայում, հայկական թագավորության անկումից հետո և գոյատևած է Կիլիկիո շրջանի հայերի համար մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Առաջին համաշխարհային պատերազմին, ինչպես արևմտահայությունը ամբողջապես, նույնպես և Կիլիկիո հայությունը ևս կոտորվեց և Կիլիկյան Աթոռը կործանվեց, հոգևորականները հազիվհազ փախան և ապաստան գտան Լիբանանում: Այստեղ Կիլիկյան Աթոռը վերակազմակերպվեց՝ իր անմիջական իշխանության տակ ունենալով Լիբանանը, Սիրիան և Կիպրոս կղզին: Եվ դա շատ բնականոն վիճակ էր, ոչ մի անհասկացողություն չկար Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի միջև: Սակայն հետզհետե Կիլիկյան Աթոռը որոշ այլ տեղեր էլ տարածեց իր իշխանությունը՝ Պարսկաստանում, Հունաստանում և ԱՄՆ-ի մեկ երրորդ շրջաններում: Ահա այս երկրներում էլ Կիլիկյան Աթոռն ունի իր միաբանները, իր ներկայացուցիչները, որոնք գործում են իբրև Կիլիկյան Աթոռի թեմեր: Մնացած բոլոր շրջանների հայ եկեղեցիները՝ Պոլսո պատրիարքարանը, Երուսաղեմի պատրիարքարանը Էջմիածնի հետ կապված են: Այսօրվա կացությունը այս է, սակայն կրկնում եմ, որ այժմ կամաց-կամաց նոր իրադրություն է ստեղծվում բարեկամա-

կան հարաբերություններ ստեղծելու այս երկու Աթոռների միջև, որպեսզի համերաշխությունը վերականգնվի և որպեսզի եղբայրական գործակցություն լինի: Որովհետև անկախ բոլոր հարցերից՝ մեկ Եկեղեցի ենք, նույնի նպատակին ենք ծառայում:

Կիլիկյան Աթոռի Հայրապետը Գարեգին Բ կաթողիկոսն է: Հետո գալիս է Երուսաղեմի հայոց Պատրիարքը՝ Եղիշե Տերտերյանը, հետո՝ Պոլսո Պատրիարք Շնորհքը:

Հայաստանում գործում են երկու՝ Արարատյան և Շիրակի թեմերը, և պիտի վերականգնենք Սյունյաց թեմը Զանգեզուր-Արցախում: ՍՍՀՄ-ի տարածքում գործում է Ադրբեջանի թեմը՝ կենտրոն ունենալով Բաքուն, Վրաստանի թեմը՝ կենտրոն ունենալով Թբիլիսին, և վերջապես Ռուսաստանի թեմը՝ կենտրոն ունենալով Մոսկվան:

— Քանի որ մենք դպրոցներում կրոնի պատմություն չենք անցնում, ուստիև շատերս չգիտենք, թե ինչով է Հայ Եկեղեցին տարբերվում քրիստոնեական մյուս Եկեղեցիներից:

— Հայ Եկեղեցին պատմականորեն պատկանում է Արևելքի քրիստոնեական Եկեղեցիների ընտանիքին: Պետական կրոն դառնալուց հետո, մանավանդ, գիր-գրականություն ստեղծելուց հետո, Հայ Եկեղեցին ավելի ազգային բնույթ ստացավ: Այսինքն՝ մեր Եկեղեցին իր գոյությունը, իր կյանքը տարածեց միայն հայ ժողովրդի զավակների վրա և ոչ թե ուրիշ, ինչպես արել են մյուս Եկեղեցիները՝ կաթոլիկ, ուղղափառ, բողոքական և այլն: Մեր Եկեղեցին ինքնուրույն զարգացավ, պահպանեց իր ազգային դիմագիծը: Հինգերորդ դարում, ճիշտ այն օրերին, երբ մեր հողի վրա փոթորկվում էր Վարդանանց պատերազմը, տեղի ունեցավ այսպես կոչված տիեզերական ժողովը Քաղկեդոնում: Ինչ-որ կրոնական հարցերի շուրջ վեճեր կային և ինչ-որ որոշումներ կայացվեցին: Հայ Եկեղեցին չմասնակցեց այդ ժողովին և չէր էլ կարող մասնակցել, քանի որ սեր հողի վրա փոթորիկ էր և տևեց ասնվազն 30 տարի: Սկզբում մենք պարտություն կրեցինք, և պարսիկները մեզ պարտադրեցին իրենց կրոնը: Մեր Մայր տաճարը վերածեցին կրակապաշտական մեհյանի, բոլոր հոգևորականները, կաթողիկոսը աքսորվեցին: Ահավոր, մի տեսակ հոգևոր ցեղասպանություն էր: Այդ վիճակը տևեց 30 տարի, մինչև Վահան Մամիկոնյանը նոր բանակ կազմեց ու էլի կռիվ ելավ, և մենք հաղթեցինք, պարսիկները ստիպվեցին զիջումի գնալ, և մենք վերականգնեցինք մեր Եկեղեցին: Երբ մեզ հասան Քաղկեդոնի ժողովի որոշումները, մերոնք որոշ հարցերում համաձայն չեղան:

Հիմա որոշ չափով կարելի է մտածել, որ մերոնք համաձայն չեղան ոչ միայն զուտ քրիստոնեական պատճառներով, այլ նաև ազգային պատճառներով: Եթե լրիվ համաձայն լինեին, պիտի մի տեսակ կախում ունենային Բյուզանդիոնի Եկեղեցուց, և մերոնք ուզեցին իրենց անկախությունը պահել: Այսպիսով, 5-րդ դարից Հայ Եկեղեցին մնաց անկախ Եկեղեցի և մինչև հիմա էլ այդպես է:

— Վերջերս լուրեր էին տարածվել Էջմիածնին կտակված Հնդկաստանի ինչ-որ միլիոնների մասին, Մայր Աթոռի կողմից բազմազավակ ընտանիքներին նպաստ վճարելու և այս կարգի նման այլ պատմություններ...

— Դրանք անշուշտ առասպելներ են: Եվ զարմանում եմ մեր հայրենակիցների միամտության, դյուրահավատության վրա, որ հավատում են այդպիսի լուրերի, որոնք հիմք չունեն: Թերևս խոսքն այն մասին է, որ իրապես մի կտակ կա Կալկաթայում անցյալ դարու վերջերից մի հայ հա-

ռուստի կողմից կտակված, որի միայն եկամուտները այն ատեն նախատեսված են եղել Նոր Նախիջևանի դպրոցների և ծերանոցի համար: Երևի մեր այդ հայրենակիցը Նոր-Նախիջևանցի է եղել՝ Փափուջյան անունով: Այնքան մեծ գումար չէ: Բայց հիմա Ռոստովում ոչ հայկական դպրոց կա, ոչ էլ ծերանոց: Վերջին 30—40 տարիներին այդ եկամուտները հավաքվել են Կալկաթայի բանկում, որոնք չեն տրվում, որովհետև այդ նպատակները չկան: Մենք մի քանի անգամ դիմել են, բայց չեն տալիս: Եվ այդ ամբողջ գումարը՝ հարյուր քանի հազար դոլար: Այն էլ ասեմ, որ եթե տան էլ, չենք կարող Կալկաթայից դուրս հանել նույնիսկ ապրանքի ձևով:

Բազմազավակ ընտանիքներին թոշակ կամ նպաստ նշանակելու մենք մեծ հնարավորություններ չունենք, բայց երբ կանայք մեկ-մեկ դիմում են բերում, այնպես, բացառության կարգով մի փոքրիկ գումար՝ 100—150 ռուբլի, տալիս ենք:

Մաղթելի է, որ մեր ժողովուրդը հավատ չընծայի սխալ լուրերի:

— 2001 թվականին լրանում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 տարին. մի քանի խոսք այդ մասին:

— Մեզ համար դա անշուշտ բացառիկ թվական է, ինչպես բացառիկ է եղել 1901-ին Խրիմյան Հայրիկի օրոք, երբ նշվել է 1600-ամյակը: Անհավասիկ հարյուր տարի անց ևս ես վստահ եմ, որ 2001-ին, մեծ շուքով, առանձին հանդիսություններով պիտի նշվի 1700-ամյակը: Դա պատմական թվական է ոչ միայն մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու համար, այլև ամբողջ քրիստոնեական աշխարհի համար: Որովհետև առաջին երկիրը, որտեղ քրիստոնեությունը պետական կրոն դարձավ, Հայաստանն էր: Մեզանից մոտ տասը տարի հետո էր, որ Կոստանդիանոս կայսրը հռչակեց քրիստոնեական կրոնի ազատությունը, բայց ոչ թե որպես պետական կրոն:

Այժմվանից մենք սկսել ենք մտածել, ծրագիր կազմել, թե ինչպես այդ տարեթիվը նշել: Արդեն բազմաթիվ առաջարկություններ կան, բայց տակավին այդ ծրագիրը չենք կազմել, առաջիկա տարվա ընթացքին պիտի կազմվի, որպեսզի պատրաստվենք: Երևի նախ գիտական նստաշրջան լինի, որ հանդես գան մեր պատմաբանները, վեր հանելու այդ պատմական մեծ թվականը եկեղեցական, քաղաքական և միջազգային տեսակետից: Եվ գուցե այդ առիթով (մեր ցանկությունն է) ինչպես ռուսները արեցին Մոսկվայում, մի նոր եկեղեցի կառուցենք Երևանում և գուցե այս անգամ Զվարթնոցի ճարտարապետությամբ: Նոր եկեղեցու կարիքն ունենք իսկապես: Երևանի նման քաղաքի պայմաններում, որի բնակչությունը մեկ միլիոնից ավելի է, չորս եկեղեցին շատ քիչ է գալիս:

Հուսանք կհաջողինք:

— Եթե անհարմար չէ, խնդրում ենք մի քանի խոսք Ձեր անձի, աշխարհիկ գործերի մասին: Գիտենք, որ Դուք փիլիսոփայական, գրականագիտական և մանկավարժական աշխատությունների հեղինակ եք և Ձեր հատընտիրը շուտով լույս է տեսնելու...

— Ծնվել, մեծացել և համալսարանը ավարտել եմ Բուխարեստում: Մասնագիտություն ունենալով մանկավարժություն, հոգեբանություն և ընկերային գիտություններ: Ուսուցչություն եմ արել հայոց ազգային վարժարանում, որը մոտ 400 աշակերտ ուներ և բավական մեծ դպրոց էր: Այդ շրջանում ես ակտիվ կերպով մասնակցում էի հայկական կյանքին: Այնտեղ բազմաթիվ հայկական կազմակերպություններ կային, կային քաղաքական կուսակցություններ: Ես որևէ կուսակցության անդամ չեմ եղել, թեև բո-

լորի հետ էլ քիչ-շատ բարեկամական հարաբերություններ եմ ունեցել, չեմ պատկանել և ոչ մի կուսակցության, որովհետև բոլորի հետ էլ որոշ առարկություններ ունեի: Այդպես էինք մտածում մեր մի խումբ հասակակից ընկերներով, լավ տղաներ էին բոլորը, և մենք առանձին մի խմբակ էինք կազմում: Իբրև արտահայտություն իմ մտածումների, ես հրատարակել եմ մի ամսագիր՝ «Հերկը», որը լույս էր տեսնում Բուխարեստում 1937—38 թվականներին, սակայն ստիպված եղանք դադարեցնել հրատարակումը, քանի որ Ռումինիոն մեջ քաղաքական մթնոլորտը հետզհետե շիկացավ, մոայլվեց, ֆաշիստական ուղղություն ստացավ: Եվ, հետևաբար, ուժեղ գրաքննություն կար, և մենք չէինք կարող ազատ մտածել ու գրել: Հետո որոշ փոքրիկ գրքույկներ եմ հրատարակել, ուսումնասիրություններ՝ «Անձնավորության գաղափարի մասին», «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ», «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ», «Ս. Գրիգոր Նարեկացի» և այլն, հոդվածներ թերթերում՝ «Նոր սերունդին համար», «Մեր ապագան», «Հայ ըլլալ» և այլն: Այդ շրջանի իմ հեղինակությունների փոքրիկ հավաքածուն լույս տեսավ այստեղ և երևի շուտով մարդիկ կարող են ծանոթանալ: Ահավասիկ մի քանի խոսքով իմ գրական գործունեության մասին. մինչ հոգևորական դառնալը: Հոգևորական դարձա 35 տարեկանում:

— Այսօր մեր ժողովուրդը քիչ թե շատ ապահով կյանքով է ապրում: Իսկ ինչպիսին է լինելու Ձեր կարծիքով մեր ազգի ապագան:

— Իմ կարծիքով, բոլոր փոքր ժողովուրդների ապագան ապահով և պայծառ կլինի, եթե ամեն տեղ հարգվեն նրանց ազգային ինքնությունը, մշակույթը և արդար իղձերը: Այն, ինչը մեր երկրում կոչվում է ինտերնացիոնալ ոգի, այդ ոգին է, որ պետք է պահպանվի, հատկապես հոգուտ փոքր ժողովուրդների: Որովհետև անցյալում մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրության կամ Ավստրիական բռնապետության շրջանակներում փոքր ժողովուրդները մեծ ժողովուրդների լծի տակ են եղել և ազատ զարգանալու հնարավորություն չեն ունեցել: Դրա համար եղել են պատերազմներ, հեղափոխություններ: Եվ, հետևաբար, այդ ինտերնացիոնալ ոգին պետք է պահպանվի, բայց պայմանով, որ գործնականի մեջ չկիրառվի ճիշտ հակառակը: Ահավասիկ այսպիսի հորիզոնի վրա եմ տեսնում նաև մեր ժողովրդի ապագայի ապահովումը սովետական ժողովուրդների ընտանիքում, ամեն մի ազգության ազգային ինքնորոշման իրավունքը պահպանելով հանդերձ:

Խաղաղություն ամենեցուն...

Հարցազրույցը վարեցին՝ ՀԱԿՈԲ ՄԱՐՏՈՒՆԻՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ